

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՈԳԵԿՈԶՈՒՄ ՀՐԱՆԴԻ ՏԻՆՔԻ ՏՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ

«ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻԻՆԸ ԹՈՒՐ-ՔԻՈՅ ՀԵՏ ՊԷՏՔ Է ԽՕՍԻ ԸՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԼԵԶՈՒՆ»

Յունուար 21ին եւրոպական խորհրդարանի «Եհուտի Մենուին» տարածքին մէջ նշուեցաւ Հրանդ Տինքի սպանութեան Տրդ տարելիցը, նախաձեռնութեամբ եւրոպական խորհրդարանի երեսփոխան՝ Ֆրանք Էնկէլի եւ ՀԲԸՄ-եւրոպայէն նիքոլա

Տինքի նման յանդուգն լրագրողներու, որոնք եւրոպական մարդկային իրաւունքներու, խօսքի ազատութեան ներկայացուցիչներն են: «Շաուլի Հէպտո»ի սպաննութիւնները յիշելով պախարակեց վերջերս «Նիւ Նորք Քայմզ»ի տնօրինութեան որոշումը, թէ «ընդունուած» սահմաններու մէջ լրագրութիւն պիտի կատարեն: Եւ խորհրդարանականը հարց տուաւ թէ ո՞վ կրնայ որոշել թէ որո՞նք են «ընդունուած» եզրերը:

Յուցադրուեցան փաստագրական ժապաւէններ Տինքի կեանքէն ու յետ մահու՝ անոր զօրակցութեան քաղաքացիական շարժումներէն: Երկրորդ խօսք անողը եղաւ Ռաքէլ Տինք, որ յիշեցուց թէ ժամանակը եկած է ճանաչումի, բոլոր սպաննուածներուն հոգիներուն հանգստեան համար:

Յատկանշական էր Բարեգործականի կեդրոնական վարչութեան անդամ եւ Հայկական Հեռուստադարոցի Հիմնադիր (Armenian Virtual College) Երուանդ Զօրեանի ելոյթը ուր ան շեշտեց թրքական կողմի պատմութեան խեղաթիւրումը, որուն զոհն են ոչ միայն թուրք ժողովուրդը այլ նաեւ եւրոպացիները: Ան ըսաւ.

«Յաջորդական թրքական բոլոր կառավարութիւնները ձգտած են
(Շար. էջ 3)



Դաւիթեանի: Այս հանդիսութեան իրենց մասնակցութիւնը բերին հանգուցեային այրին՝ Ռաքէլ Տինք, եւրոպական խորհրդարանի փոխնախագահ Կրաֆ Լամպստորֆ, եւրոպայի հակացեղապաշտական խմբաւորումը (EGAM) եւ թրքական «ՏուրՏէ» ընկերակցութիւնը:

Նշեալ օրը ժամը 18ին եւրոպայի տարբեր անկիւններէ 200 հոգի փութացած էր Պրիւսէլ: Ֆրանք Էնկէլ բացումը կատարեց հանդիսութեան. բեմ հրաւիրեց եւրոպայի խորհրդարանի փոխնախագահը որ իր բացման խօսքին մէջ շեշտեց, որ այսօր աշխարհ պէտք ունի Հրանդ